«ՄԱՅՐ

Հարգելի՛ պարոն Տեր-Եսայան,

ի պատասխան 11.05.2026թ. հ.133-2026թ. գրության՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հ.111/9 հասցեի կոյուղատար համակարգը փոխարինելու վերաբերյալ բարձրացված հարցի կապակցությամբ, տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում ջրամատակարարման/ջրահեռացման համակարգեր առկա չեն, հետևաբար դրանց սպասարկումն ու շահագործումն Երևանի քաղաքապետարանի կողմից չեն իրականացվում:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում խցանումը վերացվել է, իսկ նշված հատվածում կոյուղատար համակարգի վերակառուցման աշխատանքներ Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսված չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ